



Հայաստանում աճեցվող թզի տեսակներն
ու դրանց պահպանման
անհրաժեշտությունը



Թզենու նշանակությունն ու կարևորությունը

Թզենու պտուղներն արժեքավոր սննդամթերք են և ունեն բուժական ու դիետիկ բարձր հատկություններ:

Հասուն պտուղները՝ նայած սորտի և կուլտուրայի պայմանների, պարունակում են 15-25% շաքար: Չորացած պտուղներում՝ 60-70%: Թզի մեջ եղած շաքարը գլխավորապես բաղկացած է օրգանիզմի կողմից հեշտությամբ յուրացվող գլյուկոզից և ֆրուկտոզայից:

Թթուների պարունակությունը թզենու պտուղների մեջ ցածր է՝ 0,10-ից մինչև 0,40%: Գերակշռում է խնձորաթթուն: Թզենու պտուղները հարուստ են մարդու օրգանիզմի համար անհրաժեշտ կալցիումով և երկաթով, որոնք թզի մեջ շատ ավելի են, քան խնձորի և խաղողի մեջ: Թարմ պտուղները հարուստ են A և C վիտամիններով: Սերմերի մեջ պարունակվում են մինչև 5% ճարպային նյութեր:

Իր այս հատկությունների շնորհիվ թզենու պտուղները չափազանց օգտակար են սակավարյունության դեպքում և բուժական հատկություններ ունեն ստամոքսային և մրսածության որոշ հիվանդությունների ժամանակ: Թուզն հատկապես օգտակար է երեխաների համար:

Թզենու կուլտուրայի արժեքը պայմանավորված է ոչ միայն պտուղների սննդարար բարձր հատկություններով, այլև այդ բույսի բիոլոգիական առանձնահատկություններով: Այսպես, օրինակ, թզենին հեշտ է բազմացվում կտրոններով, որոնցից տարեվերջին ստացվում են մշտական տեղերը տեղափոխելու համար միանգամայն պիտանի տնկիներ: Թզենին վաղ է սկսում պտղաբերումը՝ տնկումից 2-3 տարի հետո, և նրա բոլոր ընձյուղները բարձր և այն էլ ամեն տարի բերք են տալիս:

Թզենու այս բոլոր հատկությունները, ինչպես նաև հողի և կլիմայական բարենպաստ պայմանները, տնտեսապես արժեքավոր սորտերի առկայությունը լայն



հնարավորություններ են ստեղծում այս կուլտուրայի արդյունաբերական աճեցման համար:

Թզենու բուսաբանական առանձնահատկությունները

Թզենին (*Ficus carica* L) թթազգիների (*Moraceae*) ընտաբիքից է, աճում է իբրև ծառ, հաճախ իբրև թուփ: Նայած աճման պայմաններին, նա լինում է տարբեր բարձրությամբ և հզորությամբ, երբեմն հասնելով մինչև 14 մետրի: Յուրա ձմեռ ունեցող շրջաններում պարբերական ցրտահարումների և մշակման ձևի հետևանքով թզենին մեծ մասամբ աճում է իբրև թուփ:

Վեգետացիայի շրջանում թզենու բոլոր մասերը պարունակում են կաթնանման հեղուկ, որը պարունակում է մինչև 13% կաուչուկ և դուրս է գալիս բույսերի թե՛ վերերկրյա և թե՛ ստորերկրյա որևէ ձևով վնասված բոլոր մասերից:



Միամյա շիվերը լինում են մեծ, դալար, կանաչ գույնի: Օգոստոսին նրանց վրա գոյանում են կողային բողբոջներ: Գարնանը նախորդ տարվա միամյա շիվերի վրա զագաթնային և կողային բողբոջներից կրկին աճում են շիվեր: Տերևային սպին, որտեղ դասավորված են բողբոջները, արտահայտված է օղակաձև հետքի ձևով, որտեղից՝ կտրոնով բազմացնելիս հեշտությամբ արմատներ են առաջանում:

Ճյուղի զագաթնային բողբոջն աճելով տալիս է տերևներ, որոնց կոթունների ծոցում գոյանում են պտղատու բողբոջներ: Այդ բողբոջներից թե՛ միամյա, և թե՛ աճող




շիվերի վրա առաջանում են սովորաբար տանձաձև ծաղկաբույլեր, որոնք հետագայում փոխվում են պտղաբույլերի, կամ ինչպես սովորաբար անվանում են՝ «պտուղների»։ դրանցից յուրաքանչյուր տերևածոցում լինում է մեկ, հազվագյուտ դեպքում երկու հատ։

Գարնանը նկատվում է անցած տարվա աշնանը կազմակերպված թզերի զարգացում, իսկ ընթացիկ տարվա շիվերի վրա սկսում են զարգանալ նոր ծաղկաբույլեր։



Ծաղկաբույլերը մսալի են, ներսից սնամեջ, ինչպես ապակյա դատարկ շիշը։ Ծաղկաբույլերը փոխվում են պտղաբույլերի, իսկ վերջիններս հանդիսանում են թզենու «պտուղները», որոնք հասունանալուց հետո գործածում են ուտելու համար։

Թզենու ծաղկաբույլերը կազմված են բազմաթիվ ծաղիկներից, որոնց ծաղկակոթունները ձուլված են իրար հետ և որից ստացվել է մի ընդհանուր ծաղկակալ։ վերջինիս մակերեսի վրա, ինչպես և բարդածաղիկ ընտանիքին պատկանող բույսերի զամբյուղներում, դասավորված են ծաղիկները։



Թզենին ունի հինգ տիպի ծաղիկներ.

ա) արական ծաղիկներ, որոնք տալիս են ծաղկափռի փոշոտման համար.

բ) իգական սերմնային ծաղիկներ, որոնք լավ զարգացած են և բեղմնավորվելուց հետո տալիս են սերմեր.

գ) իգական ամուլ (անպտուղ) ծաղիկներ, որոնք թույլ են զարգացած, ունեն թերզարգացած սպի, որն ընդունակ չէ ընդունելու ծաղկափռի։ Թզենու այդպիսի ծաղիկներ ունեցող ծաղկաբույլերն առանց փոշոտման դառնում են



պտղաբույլեր և չեն թափվում.

դ) իգական գալլակիր ծաղիկներ՝ ուղիղ կարճ սռնակով և բավականին լայն սպիռով: Սերմնարանը միաբուն է, սերմ չտվող, որտեղ իր ձվերն է դնում և զարգանում թզենու փոշոտիչ պիծակը՝ բլաստոֆագը.

ե) երկսեռ ծաղիկներ: Հազվադեպ են պատահում թզենու ծաղկաբույլերում:

Թզենու բիոլոգիական մի քանի առանձնահատկությունները

Թզենին բազմամյա բույս է, կյանքի տևողությունը հասնում է 60-70 և ավելի տարիների: Բազմացվում է տարբեր եղանակներով՝ կտրոններով, անդալիսով, արմատային մացառներով, պատվաստով և սերմերով: Արդյունաբերական նպատակների համար բազմացման ամենատարածված եղանակը կտրոններով բազմացումն է:


Թզի պատվաստումը հազվադեպ է կիրառվում, քանի որ պատվաստացում պատվաստակալին վատ է կաչում: Սերմերով բազմացումը կիրառվում է սելեկցիոն աշխատանքներում՝ նոր սորտեր առաջ բերելիս:

Թզենու ծաղկաբույլերը գոյանում են անցյալ տարվա միամյա և ընթացիկ տարվա աճող շիվերի վրա: Կտրոնով տնկած թզենին մեծ մասամբ սկսում է պտղաբերել տնկելու երկրորդ տարին, հազվադեպ առաջին, հենց տնկելու տարին: Լրիվ պտղաբերումը լինում է 7-9-րդ տարիներին:

Գարնան հյութաշարժման սկզբից մինչև ուշ աշուն գոյանում են ծաղկաբույլեր: Ծաղկաբույլերի ծաղկումը սկսում է, երբ դրանք հասնում են մոտավորապես 1.5-2 սմ մեծության, դառնում են փայլուն, առաձգական մաշկով, կողավոր և արձակում են ուժեղ, մեղրի յուրահատուկ հոտ: Այդ ժամանակ փափկում է թզի միջուկը, վարսանդները կանգնում են ուղիղ, սպիները լինում են կանաչ, փայլուն, գմյութնական թզի «աչքերը» բացվում են:



Թզենու ծաղիկները գտնվելով ծաղկաբույլի ներսում՝ քամու և միջատների միջոցով ազատ փոշոտվելու հնարավորությունից զուրկ են: Ծաղկաբույլերում փոշոտումը կատարվում է թզենու հատուկ փոշոտչի – բլաստոֆագ կոչվող պիծակի միջոցով: Բլաստոֆագը շատ փոքր միջատ է (0.1-0.15 սմ երկարությամբ), հասարակ աչքով թույլ նշմարելի:



Բլաստոֆագը տարվա ընթացքում ունենում է երեք սերունդ: Այդ սերունդների զարգացումն ընթանում է թզենու ծաղկաբույլերի բոլոր երեք սերիաների զարգացման հետ միաժամանակ: Այսպիսով, բլաստոֆագի կյանքն անխզելիորեն կապված է թզենու պտղաբերման և, գլխավորապես, ծաղկաբույլերի մեջ եղած ծաղիկների զարգացման և ծաղկման հետ: Ուրիշ պայմաններում բլաստոֆագը չի ապրում:

Թզենու գոյություն ունեցող բոլոր սորտերը կարելի է մոտավոր կերպով բաժանել երկու հիմնական խմբերի՝

1. Կապրիֆիկացման կարիք ունեցողների և
2. Առանց փոշոտման պտղաբույլեր առաջացողների

Կապրիֆիկացիայի կարիք ունեցողների թվին պատկանում են թզենու լավագույն չոր միրգ տվող սորտերը, օրինակ՝ Սարիլոբը, Կալիմիրնան և այլն: Սորտերի մեծ մասը առանց փոշոտման տալիս են հասուն



պտղաբույլեր, բայց վերջինների սերմերը լրիվ չեն զարգանում և ցանքի համար պիտանի չեն լինում: Այդ խմբին պատկանող սորտերը բազմանում են միայն վեգետատիվ եղանակով, օրինակ՝ կտրոններով:

Կապրիֆիկացիայի կարիք չունեցող մի քանի սորտեր (օրինակ՝ Կադոտա սորտը և այլն) փոշոտման դեպքում տալիս են լավագույն որակի, ծլունակ սերմերով պտղաբույլեր:

Թզենու միջին բերքատվությունն է՝ 10-15 տարեկան ծառինը՝ 50-60 կգ, 15-25 տարեկանինը՝ 80 կգ, 25 տարեկանից բարձրինը՝ 125 կգ (երբեմն 300 կգ):

Թզենու բերքատվությունը կախված է շատ պատճառներից, որոնցից կարևոր նշանակություն ունի ծառի աճեցողության ուժը: Ամենից բերքատուն են այն սորտերը, որոնք ունեն երկար շիվեր՝ 11-15 միջհանգույցներով, մեծ քանակությամբ պտղաբողբոջներով (օրինակ՝ Կադոտան, Դալմաթիկան, Բրունսվիկը և ուրիշները): Այդ պտղաբողբոջները տալիս են հասուն պտղաբույլեր, իսկ զագաթնային պտղատու բողբոջները մնում են թերզարգացած վիճակում մինչև հաջորդ տարվա զարունը:



Թզենու սորտերը

Կան թզենու երկու հարյուրից ավելի սորտեր, նրանք տարբերվում են իրարից ինչպես մորֆոլոգիական, այնպես էլ բիոլոգիական և ապրանքա-տնտեսական հատկանիշներով: Առանձնապես տարբերվում են ըստ պտղաբույլերի մեծության, կշռի, ձևի, գույնի, պտղամսի որակի և այլ բազմաթիվ հատկանիշներով: Գոյություն ունեցող ասորտիմենտի մեջ կան սորտեր, որոնք պիտանի են թե՛ թարմ վիճակում գործածելու և թե՛ այնպիսիները, որոնք պիտանի են տարբեր տեսակի վերամշակումների համար:

Թզենու սորտերը բաշխվում են մի շարք խմբերի ըստ ծաղիկների հատկանիշների, նրանց փոշոտման բնույթի, պտղաբույլերի կազմվելու, այսինքն՝ ըստ սորտերի վերաբերմունքի դեպի կապրիֆիկացիան: Թզենու սորտերի մեծ մասի պտղաբույլերը կազմավորվում են առանց փոշոտման:

Ահա թզենու հիմնական խմբերի և սորտերի բնութագիրը:

Կապրիֆիկ: Այս խմբի թզենիները, ինչպես արդեն մատնանշվեց, տալիս են երեք տիպի ծաղկաբույլեր՝ պրոֆիկներ, մամոններ և մամեններ: Ծաղկաբույլերն ունեն արական և գայլակիր ծաղիկներ: Բլաստոֆագի բացակայության դեպքում ծաղկաբույլերը չեն զարգանում: Այդ տիպի սորտերը փոշոտիչներ են կապրիֆիկացիա պահանջող թզենու համար: Պտղաբույլերը ուտելի չեն: Այդ խմբի պատկանում են «Կապրի № 3», «Դեղին փոշոտիչ» և այլ սորտերը:

Զմյուռնական: Տվյալ խմբի բույսերն իզական սեռի են, սերմնային իզական ծաղիկներով: Ծաղկաբույլերը սերմեր են զարգացնում փոշոտվելու դեպքում: Զբեղմնավորված ծաղկաբույլերը սովորաբար լիովին թափվում են: Բեղմնավորվելիս ստացբում են բարձր որակի չոր միրգ տվող պտղաբույլեր:

Սորտերն են՝ **Զմյուռնական, Կալիմիրնա** և այլն:



Սովորական: Ծառի բոլոր գեներացիաների ծաղկաբույլերն ունեն իզական ծաղիկներ, որոնք տալիս են առանց կապրիֆիկացիայի հասունացող պտղաբույլեր:

Այս խմբի սորտերը գոյացնում են անկորիզ պտղաբույլեր, որոնք շատ արժեքավոր են պահածոներ պատրաստելու և թարմ վիճակում օգտագործելու համար:

Սորտերն են՝ **Ադրիատիքական, Միսսիոն, Կադոտա** և այլն:



Բացի մատնանշած խմբերից, գոյություն ունեն և այլ, անցողիկ տիպի խմբեր, որոնց սորտերի մեծամասնությունը արդյունաբերական նշանակություն չունի: Հայաստանում տարածված թզենու սորտերը քիչ են ուսումնասիրված: Դրանց վերաբերյալ գոյություն ունեցող թեկուզ ոչ լրիվ տվյալները ցույց են տալիս, որ հանրապետությունում գոյություն ունեն վերևում հիշած երեք խմբիէ ինչպես Կապիֆիկի, Զմյուռնականի, Սովորականի սորտերը: Ղափանի և Մեղրու շրջաններում հայտնաբերված է բլաստոֆագ պիծակը, որն ասում է այն մասին, որ այդ այստեղ կան թզենու Զմյուռնական խմբի տեղական սորտեր:

Թզենու տեղական տեսականին աչքի է ընկնում իր ցրտադիմացկուն և, ընդհանարպես, դիմացկուն հատկությամբ, բայց հասուն պտղաբույլերը միջակ որակի են, պտղամիսը խոտահամ է, չորացրած պտուղը բարձրորակ չէ:

Թզենու տեղական սորտերի հիմնական բերքը ստացվում է ընթացիկ տարվա շիվերի վրա, ինչպես Կադոտա, Մագնոլիա, Վիոլետ դը լա Ֆրետտե և այլ սորտերի

մոտ: Այսպիսով, տեղական սորտերի մոտ անցյալ տարվա միամյա շիվերը ցրտից վնասվելու դեպքում՝ բերքը շատ չի իջնում:

Տնտեսական նպատակների համար թզենու սորտերը ընտրելիս, պետք է առաջնորդվել նրանով, որ սորտերն ըստ օգտագործման նպատակների բավարարեն հետևյալ պահանջներին.

1. Չորացման համար: Պտղաբույլերը պետք է լինեն խոշոր, նուրբ և բաց գույնի մաշկով, առանց վնասվածքների, ծառի վրա լավ թառամող:



2. Պահածոների համար: Պտղաբույլերը միջին մեծությամբ, հաստ մաշկով, համաչափ դեղին գունավորումով, մսալի, անկորիդ, ամբողջական միջուկով (օրինակ՝ Կադոտա):

3. Թարմ գործածության համար: Պտղաբույլերը խոշոր, վնասատուներից և հիվանդություններից զերծ հաստ մաշկով, արտաքին գեղեցիկ տեսքով, նուրբ, հյութալի և քաղցր միջուկով, բավարար թթվությամբ և արոմատով:



4. Սուրճի համար: Բոլոր սորտերը, գերադասություն տալով մուգ գունավորում և զարգացած սերմեր ունեցողներին, որոնք բովելիս տալիս են բուրավետ և հաճելի արտադրանք:

Սորտավորման համար անհրաժեշտ է հաշվի առնել թզենու սորտային առանձնահատկությունները. այն պտղաբույլերը, որոնց խոռոչները լիքը չեն, իսկ



«աչքերը» բաց են, սովորաբար չորացնելու համար անպետք են: Մի քանի սորտերի մոտ, առատ փոշոտման դեպքում, պտղաբույլերի վրա գոյանում են ճեղքվածքներ, դա հետևանք է այն բանի, որ համեմատաբար թույլ զարգացած ծաղկակալի ներսի պատերի վրա պտղաբույլերի վրա մեծ քանակությամբ սերմնարաններ են զարգանում:

Մի շարք սորտերի պտղակոթունը թույլ է կպած շիվերին. այդպիսի դեպքում պտղաբույլը թեթևակի չմշկվելիս պոկվում և ընկնում է:

Ուշահաս, այսինքն՝ աշնանային շրջանում հասունացող պտուղներ ունեցող սորտերը չեն կարող օգտագործվել բարձրորակ չոր թուզ ստանալու համար:

Հայաստանի կլիմայական պայմաններում թզենու կապիֆիկացիա պահանջող սորտերի լայն արտադրական մասշտաբներով մշակությունը հնարավոր է առաջին հերթին՝ Մեղրու շրջանի ցրտից պաշտպանված տաք վայրերում, ընդ որում կայուն բերք ստանալու համար, երբ ձմռան սառնամանիքներից ցրտահարվել են միամյա շիվերը նրանց վրա ձմեռող բլաստոֆագների հետ միասին, անհրաժեշտ է ապահովել իգական բույսերի արհեստական փոշոտումը: Դրա համար սավառնակներով կամ երկաթուղով պետք է ներմուծել կապրիֆիկի ծաղկաբույլեր (մամռի մեջ) այն շրջաններից, որտեղ թզենին չի ցրտահարվել (օրինակ՝ Ադրբեջանից, Թուրքմենստանից, Վրաստանից): Ծայրահեղ դեպքում աշնանը՝ սառնամանիքներից առաջ՝ պետք է հավաքել կապրիֆիկի ծաղկաբույլերը և ձմռան ընթացքում մինչև զարունը պահել մամռի ու ավազի մեջ՝ պահեստներում կամ նկուղներում:

Հայաստանում թզենու լայն սորտափորձարկումը թերի է անցկացրած, ուստի և նոր սորտեր ներդնելու գործում առաջին հերթին պետք է կանգ առնել միայն կապրիֆիկացիա չպահանջող սորտերի վրա: Պետք է նշել, որ անհրաժեշտ է մշակել ոչ միայն արդյունաբերական սորտեր (չորացնելու, թարմ վիճակում սպառելու, վերամշակելու համար), այլև այնպիսիները, որոնք ընդունակ են ընթացիկ տարվա շիվերի վրա մեծ բերք տալու, որպեսզի թզենու ցրտից վնասվելու դեպքում էլ, այնուամենայնիվ, ապահովված լինի տվյալ տարվա բերքը:



Մշակության համար մեծ ուշադրության է արժանի **Զմյուռնական Սարի-լոբ** կոչվող սորտը, որը 120 տարի սրանից առաջ Կովկաս է ներմուծել Շավրովը: Բարձր բերքատու է, խոշոր, վնասատուներից և հիվանդություններից չվնասվող պտղաբույլերով: Թարմ վիճակում գործածելու համար հիանալի հատկություններ ունի, չորացրածն էլ շատ ընտիր որակի է: Սարի-լոբը կապիֆիկացիա է պահանջում: Այդ սորտի մշակությունը լիովին հնարավոր է Մեղրիի պաշտպանված տաք վայրերում:

Հայաստանի մերձարևադարձային շրջանների համար դեռ չի ուսումնասիրված և համապատասխան ստանդարտային սորտեր չի ընտրված: Սակայն պետք է նշել, որ առաջին հերթին ամենամեծ ուշադրության են արժանի հայկական սորտերը, որոնք հարմարվել են և դառել դիմացկուն՝ միջավայրի անբարենպաստ պայմաններին:

Ստորև ներկայացված են Հայաստանում տարածված և հետաքրքրություն ներկայացնող թզենու մի քանի սորտերի նկարագրությունը:

Կադոտա: Մերձարևադարձային բոլոր շրջանների համար հանձնարարվող սորտերից մեկն է: Գործածվում է թարմ վիճակում, պահածոներ պատրաստելու և չորացնելու համար: Կապրիֆիկացիա չի պահանջում: Վաղահաս է, բերքառատ, վեգետացիայի ընթացքում պտղաբերում է երկու անգամ, տալիս է լավորակ պտղաբույլեր: Վերջիններս միջին մեծությամբ են, ոսկեդեղին, սպիտակ միջուկով, մինչև 28% շաքարի պարունակությամբ: Չորացնելիս տալիս է 22% ելանք: Չորացրած պտուղների մեջ մոտ 60% շաքար կա:



Ադրիատիքական (Ադրիատիքական Սպիտակը): Կադոտալի նման հանձնարարվում է մերձարևադարձային բոլոր շրջանների համար: Կապրիֆիկացիայի կարիք չի զգում: Պտղաբույլերը միջին մեծությամբ են կամ խոշոր, կլորավուն, «աչքը» փակված չի, մաշկը բարակ է, արևի տակ դեղնավուն, միջուկը

կարմիր, կամ սպիտակ՝ մանիշակագույն ջիղերով: Պտղաբույլերը խոնավ հողերում թթվում են, չորացրած պտղաբույլերը՝ անհամասեռ, բաց գույնի, դարչնագույն միջուկով: Մակերեսը՝ թույլ կնճռոտած, ներսում մեծ քանակությամբ սերմեր:



Սորտը բերքառատ է, արագ աճում է, լավ խնամքի դեպքում սկսում է պտղաբերել չորրորդ տարուց:



Բրունավիկ (Չապլա): Պտղաբույլերն օգտագործում են թարմ վիճակում, պահածոներ պատրաստելու, հազվադեպ՝ չորացնելու համար: Պտղաբերում է տարեկան երկու անգամ և առանց փոշոտման: Բերքառատ է, բավականին ցրտադիմացկուն, պտղաբույլերը միջին մեծությամբ, դեղնավուն-դարչնագույն, մանուշակագույն երանգով, թարմ վիճակում պարունակում են մինչև 19% շաքար: Չորացնելիս տալիս են մինչև 40% ելանք:

Արմավային (Ներապոլիտանական արմավայինը): Օգտագործում են չորացնելու և պահածոներ պատրաստելու համար: Փոշոտում չի պահանջում, ուշահաս է: Պտղաբույլերը՝ տանձաձևից կլոր ձևի, խոշոր, դեղին-կանաչավուն, շատ քաղցր: Չորացնելու դեպքում տալիս են 40% ելաք: Լաճ է աճում Սյունիքի մարզում, հատկապես Մեղրիում:



Դալմաթյան: Պտղաբույլերը պիտանի են թարմ վիճակում գործածելու համար: Կապրիֆիկացիա չի պահանջում, վեգետացիայի ընթացքում տալիս է երկու առատ բերք, միջահաս է, պտղաբույլը խոշոր,

բաց կանաչ գույնի, քաղցր (շաքարի պարունակությունը 20%-ից ավել): Չորացնելիս տալիս է 30%-ից ավելի ելանք:

Ղրիմի 158 (հուլիսյան): Սորտը փոշոտում չի պահանջում, բերքառատ է, վաղահաս: Պտղաբույլերը խոշոր են, մուգ կարմիր գույնի, շաքարի մեծ պարունակությամբ, պիտանի են թարմ վիճակում գործածելու համար:



Կալիմիրնա: Չորացնելու համար լավագույն սորտն է, որը կարելի է օգտագործել նաև կոնսերվացնելու և թարմ վիճակում գործածելու համար: Սորտը փոշոտում է պահանջում, պտղաբերում է տարեկան մեկ անգամ, բերքառատ է, պտղաբույլերը ուշ աշնանը հասնող, խոշոր, համարյա կլորավուն, ոսկեդեղին, քաղցր վարդագույն միջուկով: Նպատակահարմար է Մեղրիում աճեցնելու համար:

Սադի-լոբ (Զմյուռնական №2): Սորտը փոշոտում է պահանջում, տալիս է լավ որակի չոր արտադրանք (ելանքը մոտ 30%), ուշահաս է, պտղաբերում է տարեկան մեկ անգամ: Պտղաբույլերը՝ միջին մեծությամբ, կանաչավուն-սերուցքագույն, պարունակում են մինչև 17% շաքար: Այս սորտի աճեցումը նույնպես բարենպաստ է Սյունիքի մարզի համար:



Ղեղին փոշոտիչ: Դիմացկուն է երաշտին և սառնամանիքներին, լավ փոշոտիչ է կապրիֆիկացիա պահանջող սորտերի համար: Ծաղկաբույլերը խոշոր են, առատ ծաղկավիռով:



Ուզբեկական ղեղին (ղեղին թուզ): Պիտանի է չորացնելու և թարմ վիճակում գործածելու համար, կապրիֆիկացիա չի պահանջում, բերքառատ է: «Ամառային»

մերձարևադարձային պայմաններում (օրինակ՝ Ուզբեկստանում) լավ է տանում ձմեռային թաղումը: Պտղաբույլերը միջին մեծությամբ են (42 գրամ), կլորավուն տափակացած, բաց վարդագույն և քաղցր (15% շաքար) միջուկով: Չոր թզի ելանքը կազմում է 24,4%: Չոր թուզը պարունակում է 56% շաքար:

Նպաստավոր պայմաններ առկա են Արարատյան դաշտավայրում:

Քյուրդեշա: Սյունիքի մարզում օգտագործվում է մուրաբա պատրաստելու համար. գործածվում է նաև թարմ վիճակում: Տեղական լավագույն սորտերից մեկն է: Կարպրֆիկացիա չի պահանջում, բերքառատ է, պտղաբերում է տարեկան երկու անգամ, ցրտադրմացկուն է: Պտղաբույլերը մասսայաբար հասունանում են օգոստոսի վերջերին և սեպտեմբերի ընթացքում, չորացնելիս տալիս են ցածրորակ արտադրանք: Թուզը խոշոր է, կանաչ գույնի, քաղցր (շաքարը՝ 15%): Լավ է աճում Հայաստանի մերձարևադարձային բոլոր շրջաններում:



Ուշադրության են արժանի նաև **Բուժեղուտ** (մանուշակագույն), **Մոխրագույն Թուզ**, **Ղրիմի №26**, **Մեղովի**, **Սարի-Խանլարի** և այլ սորտերը:

Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):